## ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Չայնարկությունները մարդկային հուզազգացական վերաբերմունք արտահայտող բառեր են, որոնք, որպես կանոն, նախադասության մեջ հանդես են գալիս միջանկյալ բառի գործառույթով: Դրանք կենդանի խոսակցական լեզվում և մանավանդ գեղարվեստական խոսքում հաճախ են կրկնվում: Քանի որ ձայնարկություններն արտահայտում են հուզական ու կամային ամենատարբեր վիճակներ, վերաբերմունքներ, ուստի դրանց կրկնությունը գեղարվեստական խոսքում հաճախ դառնում է անխուսափելի անհրաժեշտություն ոչ միայն հեղինակի վերաբերմունքի դրսևորման, այլև հերոսների հուզաշխարհի, զգացումների ու ապրումների արտահայտման համար: Երբեմն տվյալ վերաբերմունքի դրսևորման ամենանախընտրելի ձևը լինում է ձայնարկության կրկնությունը: Այսպես, օրինակ, Ավ. Իսահակյանը «*Պահ, պահ*, մարդիկ ինչքա՞ն փոքր են» նախադասությամբ ընտրել է զարմանքի արտահայտման լավագույն տարբերակը:

Չայնարկություններն ընդհանրապես և դրանց կրկնությունը մասնավորապես ուժեղացնում են խոսքի դինամիզմը և ստեղծում անմիջականություն՝ ապահովելով գեղարվեստական պատումի սուբյեկտիվ գունավորումը: Ահա «Անուշ» պոեմից մի փոքր հատված, որտեղ երևում է տվյալ բարդ ու լարված իրավիճակում հայտնված մարդու հոգեկան խռովքի դրսևորման հարցում ձայնարկության կրկնության հուզական-գնահատողական դերը. «Ու ամեն կողմից ուրախ հրռհրռում, Թունալի ծաղրով կանչում են, գոռում.-...*Հա՛, հա՛, հա՛*, տղե՛րք, Շատ էլ լավ կանի. Մեջքը թա՛փ տըվեք, Թող մին էլ բռնի... *Հա՛, հա՛, հա՛*, տըղե՛րք, Մեջքը թա՛փ տըվեք...» /ՀԹԸԵ, 180/: Այստեղ կարևոր է նաև ձայնարկություններին ուղեկցող կոչականի կրկնությունը:

Խոսքի մեջ ձայնարկությունը կրկնվելու տարբեր յուրահատկություններ է դրսևորում: Ավելի հաճախադեպ է պարզ կազմությամբ զգացական ձայնարկության կերպավորական կրկնությունն ուղղակի խոսքի սկզբում. «- *Օհ, օհ, օհ*, էդ ծառաների բանն էլ մի՛ ասի,- էս ու էն կողմից սկսեցին բողոքել տիկին հյուրերը» /ՀԹԸԵ, 267/: «- *Հա՛, հա՛, հա՛, հա՛*, քահ-քահ խընդաց Մըսրա դաժան

թագավորը» /Ն.տ., 240/: Այս նախադասություններում նախադաս կրկնյալ ձայնարկությանը հաջորդում են կրկնորդ ձևերը, որոնց թվական գերակայությունն էլ նպաստում է առաջին նախադասության մեջ դժգոհության, իսկ երկրորդում՝ ամբարտավան գոհունակության դրսևորմանը:

Ուղղակի խոսքում կրկնվում է նաև կամային ձայնարկությունը: Այս դեպքում կրկնյալ և կրկնորդ ձևերը միմյանցից հեռանում են, միջարկվում նախադասության տարբեր անդամներով, ինչպես՝ «- *Ամո՜թ* քեզ, Մոսի՛, թուք ու նախատինք, *Ամո՜թ* քեզ նըման գոված իգիթին...» /ՀԹԸԵ, 180/:

Չափածո խոսքում շատ հաճախ կրկնությամբ հանդես է գալիս կոչական ձայնարկությունը՝ կազմելով անդեմ միակազմ նախադասություն, ինչպես՝ «Համբարձում, յայլա, *Յայլա ջան, յայլա*, Հուր սըրտեր, *յայլա, Յայլա ջան, յայլա*» /ՀԹԸԵ, 175/: Այստեղ կրկնվող ձայնարկությունները հաղորդակցական դեր են կատարում: Կրկնվում է նաև բնաձայնական կամ նմանաձայնական ձայնարկությունը, միայն թե այս դեպքում կրկնությունը հիմնականում երևան է գալիս նախադասության մեջտեղում կամ վերջում՝ առաջին դեպքում ընդհատելով նկարագրական պատումը բնության որևէ առարկայի կամ կենդանական ձայնի կրկնական արտահայտությամբ, իսկ երկրորդ դեպքում յուրովի ամփոփելով խոսքի բովանդակությունը, ինչպես՝ «Աձխոտ գոգնոց կապած, ծխախոտը բերանին երիտասարդը մոտեցավ, ոտքը ծալեց, *շըխկ, շըխկ*, ու էլի մտավ դարբնոց» /ՀՄՕ, 181/: «- Ինչքան էլ որ լինիս զգույշ, Չարի համար թե վաղ, թե ուշ, էդ է պահված, Աղվես աղա, *Ղա՜, ղա՜, ղա՜, ղա՜*... »/ՀԹԸԵ, 119/: Այստեղ ընդգծված ձայնարկություններում, բնականաբար, վերաբերմունքային-գնահատողական տարրը բացակայում է. դրանք բնաձայնության կերպավորական կրկնություններ են:

Մինչև հիմա վկայակոչված օրինակներում կրկնվող ձայնարկությունները հիմնականում պարզ բառեր են: Նմանապես՝ սակավ հաճախականությամբ կրկնվում են նաև բարդ ձայնարկությունները: Համեմատաբար ավելի հաճախադեպ է երկրորդ բաղադրիչում բաղաձայնի հավելումով կրկնավոր ձայնարկության կրկնությունն ուղղակի խոսքում. «- *Ախ – վախ, ախ – վախ*, - կանչեց ծառը, - Մուկիկի պես մարդը մեռնի՞» /ՀԹԸԵ, 128/:

Ամեն մի ձայնարկություն, առանձին վերցրած, բազմիմաստ է ու բազմերանգ, և նրա յուրաքանչյուր գործածության մեջ գերակայում է այդ իմաստներից մեկը, կրկնվելիս էլ կարևորվում է հենց այդ գերակայող նշանակությունը:

Այսպես՝ հետևյալ նախադասության մեջ *պո* ձայնարկության կրկնությամբ ավելի է ընդգծվում նրա զարմացական իմաստը. ինչպես՝ « Ու ներս մըտավ ծեր կեսուրը. – Հո՛, *պո՛, պո՛, պո՛*, կանչեց խեղճը ...» /ՀԹԸԵ, 96/:

Ձայնարկությունը շատ է կրկնվում նաև երկխոսության մեջ՝ արտահայտելով ամենատարբեր զգացումներ և, դրանով պայմանավորված, նաև տարբեր վերաբերմունքներ: Ձայնարկության նման հետևողական կրկնությունն ավելի բնորոշ է դրամատիկական ստեղծագործությանը: Այստեղ շատ հաճախ երկխոսությունը ընթանում է երկու կամ երկուսից ավելի գործող անձանց միջև, և յուրաքանչյուրի խոսքն ավարտվում է ձայնարկության կերպավորական կրկնությամբ: Օրինակ՝

«ՄՈՒՆԵՏԻԿ. Ձորք է գալիս, *պահ, պահ, պահ, պահ*:

ՀՍԿԱՆԵՐ. Ձորք է գալիս, *վահ, վահ, վահ, վահ*: /ԴՈԵժ, 219/:

Երբեմն էլ երկխոսությունը վարում է միևնույն անձը, երբ նա միայնակ է, խոսում է բարձրաձայն և ինքն էլ արձագանքում իր ասածին՝ հաստատելով կամ ժխտելով այն: Եվ նման երկխոսության մեջ հաճախ գերակայում է ձայնարկության կրկնությունը: Այսպես, օրինակ, դիտարկենք Մ. Գալշոյանի վեպից մի փոքր հատված. «- Հա՜-հա՜-հա՜, - ձայնակցեց Հերոն և որոշեց դառնալ՝ տղերքի հետ մի լա՜վ ծիծաղել, բայց մտավ դատարկ գրասենյակը:

- *Հա՜-հա՜-հա՜*... ծիծաղեց Հերոն,- Անդրուշ,Աստված քեզ էվելի շնորհք տա... *Հա՜-հա՜-հա՜*... Աստված քեզ ուրախություն տա, լաո... *Հա՜-հա՜-հա՜*... - Հերոն քայլում էր դատարկ գրասենյակում, օրհնում Անդրուշին ու ծիծաղում: - *Հա՜-հա՜-հա ա՜*...էրգրից հետո էսպես ծիծաղած չկամ, լաո... *հա՜-հա՜-հա ա՜*.»/ՄԳՁՄ, 249/: Սա թվացյալ երկխոսություն է՝ ձայնարկության պարբերական կրկնությամբ: Թվացյալ ենք համարում, քանի որ խոսողի արտաքին /տվյալ դեպքում՝ բանավոր/ խոսքն է՝ առանց խոսակցի /խոսակիցների/ ներկայության: Խոսողը /Հերոն/ ասում է այն, ինչ որ պիտի ասեր խոսակցի /Անդրուշ/ ներկայությամբ՝ դրսևորելով իր ակտիվ վերաբերմունքը՝ հրճվանքն ու ուրախությունը: Ուշագրավ է, որ բերված հատվածում ուղղակի խոսքը սահմանափակվում է կրկնված ձայնարկությամբ: Գրողը, որպեսզի ամբողջովին արտահայտի իր հերոսի հրճվանքն ու ուրախություն խորքային ամբողջականությամբ, ընտրել է անսովոր ծավալի կրկնավոր ձայնարկություն և այն միևնույն խոսքային իրադրության մեջ կրկնել է վեց անգամ՝ առանց այլ բառերի հետ շարակցելու, բայց քանի որ ասելիքը (համապատասխան վերաբերմունքի դրսևորումը)

ավարտուն է, ուստի այդ կրկնավոր ձայնարկությունն ամեն անգամ գործածվել է նախադասության արժեքով, հաղորդակցական գործառույթով:

Ձայնարկությունը կերպավորական կրկնությամբ ավելի հաճախ հանդես է գալիս նախադասության սկզբում, երբ, կրկնվելով առանց այլ բառերով միջարկվելու, իր կրկնյալ և կրկնորդ ձևերի կողք կողքի շարադասությամբ արտահայտում է ամենատարբեր զգացումներ՝ ցավ, վիշտ, ափսոսանք, ուրախություն, հրճվանք և այլն. ինչպես՝ «-*Վըի՜, վըի*...,-մղկտում էր Անանը՝ ցավերից գալարվելով...»/ՆԴ, 70/, «*Վա՜, վա՜*, է՜, չհատա՜վ,- բացականչեց Արտեմը /և.տ., 83/:

Նախադասության սկզբում կրկնվում է նաև կամային ձայնարկությունը՝ ավելի հաճախ կենդանուն մղելով հեռացման. ինչպես՝ «- *Փի՛շտ, փի՛շտ*,- վեր թռանք ամենքս.... » /ՀԹԸԵ, 278/:

Կամային ձայնարկությունը կրկնվում է նաև խոսակցին դիմելիս՝ նրան դեպի որևէ գործողության կատարման մղելու նպատակով: Այս դեպքում ավելի հաճախ ձայնարկությունը լինում է կրկնավոր, և նրա կրկնյալ ու կրկնորդ ձևերը գործածվում են խոսքի սկզբում ու վերջում՝ օղակելով ասվածը. ինչպես՝ *«Է-հե՜-հե՜*,- ալիք-ալիք դիզվեց ձայնը,- ժողովո՜ւրդ... Թագավորի հրամանով առավոտը կանուխ ձիատերը ձիով քաղաա՜ք, *հե՜-հե՜*... Ով չտանի, թագավորի հրամանով տունը, տեղը, *է-հե՜-հե՜*...» /ԱԲ, 1, 286/:

Նախադասության սկզբում ձայնարկության կերպավորական կրկնությանը հաճախ հաջորդում է կոչականը՝ մատնացույց անելով այն անձը, որին ուղղված է ձայնարկությամբ արտահայտվող ամբողջ զգացականությունը. ինչպես՝ «-*Վա՜, վա՜*, Մո՛սի ջան, ինձ մի ըսպանիր, Սըրանից հետո չե՛մ սիրիլ ընրան....» /ՀԹԸԵ, 181/: *«Ա՜խ, ա՜խ*, անգի՛ն քույրիկ... սրտիս և ուղեղիս մեջ դժոխք կա..» /ՆԴ, 288/:

Երբեմն էլ կոչականը նույնությամբ կամ լրացումով /լրացումներով/ համալրված գործածվում է կրկնյալ և կրկնորդ ձայնարկությունների միջև կամ կրկնվում է դրանց հետ. ինչպես՝ «*Ջա՜ն, ջա՜ն*, մատաղ, *ջա՜ն*, -արտասանեց պառավ Մարանը և հորանջեց» /ՆԴ, 79/:

Հաճախ կրկնյալ և կրկնորդ ձայնարկությունները հարաբերվում են տարբեր կոչականների և, բնականաբար, ունենում են տարբեր վերաբերություններ. «-...*Հե՜յ ուլատեր, հե՜յ գառնատեր*, ելեք, շուտով բացեք դրռներ» /ՀԹԸԵ, 220/:

Գեղարվեստական խոսքում, մանավանդ չափածոյում, ռիթմական ներդաշնակության պահանջով ձայնարկության կերպավորական կրկնությամբ բանատողը նույն կոչականի ուղեկցությամբ կարող է այլ բանատողերի միջարկումով պարբերաբար կրկնվել՝ ուժեղացնելով տրամադրության ու դրամատիզմի գերակայությունն ամբողջ խոսքի շղթայում: Այսպես՝

Թող մին էլ բըռնի...
*Հա՛, հա՛, հա՛*, տըղե՛րք,
Մեջքը թա՛փ տըվեք...» /ՀԹԸԵ, 180/:

Ձայնարկությունը կերպավորական կրկնությամբ, առանց կոչականի հետ հարադրվելու, տվյալ հոգեբանական վիճակի ընդգծումով կրկնվում է նաև նախադասության վերջում. ինչպես՝ «Բայց մեր սերը այս անգամ դժբախտ վախճան ունեցավ *ավա՜ղ, ավա՜ղ*...» /ԱԻ, 3, 64/:

Ձայնարկության կրկնության արժեքն ավելի է մեծանում, երբ այն հանդես է գալիս որպես լեզվական արտահայտչամիջոց, որպես կրկնաբերական բանադարձում: Ինչ խոսք, ձայնարկությունների արտահայտչական հնարավորությունները մեծ չեն, և նյութական իմաստ ունեցող բառերի համեմատությամբ դրանք ավելի սակավ են հանդես գալիս խոսքի գեղագիտական կողմին ծառայելու նպատակով: Համեմատաբար ավելի հաճախադեպ է ձայնարկության հարակրկնությամբ հանդես գալը, ընդ որում՝ կրկնության այս շարքը երևան է գալիս բանաստեղծական տան վերջին տողերում՝ իբրև նախորդ մասի հաղորդման նկատմամբ հեղինակի զգացական վերաբերմունքի ընդգծված դրսևորում և կամ իբրև նախորդ հաղորդումից արված իուզական վերաբերմունքային հետևություն. օրինակ՝

«*Ա՜խ*, մերի՛կ ջան... վզովս ընկավ, սըրտին գըրկեց ու լացեց,-
*Ա՜խ*, բալա՛ ջան, ղարիբ բալա՛, էդ դո՞ւն ես...» /ԱԻ, 2, 165/:

Հարկ է նշել ձայնարկության օղակային կրկնության գործառումը: Ձայնարկությունը կազմում է օղակ, երբ շարահյուսական կամ տաղաչափական միավորը սկսվում ու վերջանում է միևնույն ձայնարկությամբ, որով ապահովվում է, տվյալ զգացականության գերակայությունը հաղորդման մեջ: Օղակի դրսևորման պարզագույն ձևը նույն ձայնարկության արտահայտվելն է նախադասության սկզբում և վերջում. ինչպես՝ «*Վա՜յ*, Կիկոս ջան, *վա՜յ*...»/ՀԹԸԵ, 390/: Մանավանդ արձակ խոսքում ձայնարկությամբ օղակ է կազմվում տարաբնույթ ձևերով: Այսպես, օրինակ, Թումանյանի՝ 42 պարբերությունից կազմված

«Ծղրիդը» պատմվածքի առաջին պարբերությունը կազմված է *ծրռռ* բնածայնական ձայնարկության կրկնությամբ, որն ինքնին փաստում է ամբողջ խոսքի շղթայում այդ բնածայնության իմաստի գերակայությունը: Եվ ահա այդ նույն ձայնարկությունն այնուհետև իր կրկնյալ ու կրկնորդ ձևերով կրկնվում է՝ 3-րդ, 30-րդ և նախավերջին՝ 41-րդ պարբերությունների վերջում՝ ծառայելով խոսքի ընդհանուր շղթայում տվյալ բնածայնության իմաստի ընդգծված պահպանմանը և կշռույթային ներդաշնակության ապահովմանը: Ընդ որում՝ հիշյալ ձայնարկության առաջին և վերջին արտահայտությամբ ձևավորվում է ընդհանուր օղակը, իսկ 3-րդ և 30-րդ պարբերությունների վերջում երևան եկող կրկնությունները նույն 1-ին պարբերության հետ կազմում են միջանկյալ օղակներ: Ահավասիկ առաջին միջանկյալ օղակը.

« Դեռ ով գիտի, գուցե էդ ժամանակ մի ծառի կամ թփի տակ էլ պառկած խորասուզվել եք ջինջ, կապույտ երկնքի խորության մեջ, մաքուր, թեթև երազների մեջ, իսկ չորս կողմերդ ծավալվում է համատարած՝ *ծրռռ՜...* *ծրռռ՜...* »/ՀԹԸԵ, 305/ :

Այսպիսով, ձայնարկությունների կրկնությունն արդի հայերենում արտահայտվում է տարբեր իրացումներով՝ հաղորդման բովանդակության նկատմամբ խոսողի /գրողի/ հուզազգացական վերաբերմունքն ընդգծելու համար :

**Համառոտագրություններ**


ԱԲ - Ա. Բակունց, Երկեր, հ. 1, Երևան, 1975 :
ԱԻ - Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.հ. 2, 3, Երևան, 1974-75 :
ԴԴԵԺ- Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1985 :
ՀԹԸԵ - Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1978 :
ՀՄՕ – Հր. Մաթևոսյան, Օգոստոս, Երևան, 1967 :
ՄԳՁՄ – Մ. Գալշոյան, Ձորի Միրոն, Երևան, 1983 ;
ՆԴ - Նար-Դոս, Երկեր, Երևան, 1977 :
ն.տ. – նույն տեղը :